

ԶԵԽԱԳՐԻ ԽՐԱՎՈՐԸՆԴ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՀՈՂԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ

ՊՐԱԿ Բ.

КНИГА ДОЛЖНА БЫТЬ  
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗДНЕЕ  
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

631.47

11369

21-19

Читавший книгу, ф.:

в шифровальнице

член рабочей группы Вн.

ՀԱՅԿԱԿՈՆ ՍՊԸ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՇՈՒԳՈ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

631.47

Ն-19

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Զեւագրի իրավունքով

ԿԱԶԻԴՎԱՌ Է 1961 թ.

# ՀՈՂԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՊՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ

ՀՈՂԱՌԱԶԱՑՄԱՆ ԳԵ՛ՐՈԳԻԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱՆՆԵՐԸ

Կ. Ա. Մ.

ՀՈՂԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԷՄԲՐԻՈՆԱԼ ՀՐՋԱՆ

ԹՐԱԿ Բ.



ՊԵՏԱԿԱՆ ՀԵՇՈՒԳՈ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏՎԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1946

Խմբագիր

Հ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

---

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկրի մակերևույթին տեղի ունեցող բոլոր երևոյթները, այդ թվում և հողակազմությունը, իրենց խորն արմատներն անեն երկրակազմության մեջ և ղեկավարվում են տիեզերական ընդհանուր օրինքներով, այդ իսկ տեսակետից ավելորդ չենք համարել առքստում թուուցիկ կանգ առնել այդ խընդիրների շուրջը:

Հողը որպես բնապատմական զարգացող մարմին ենթակա է միջմոլորակային ուժերի, արեգակի էներգիայի և երկրի սեփական ուժերի ազդեցության, ուստի և հողառաջացման էմբրիոնալ վուլը մեր աշխատությունում դիտում ենք այդ ուժերի ազդեցության տեսանկյունից:

Քանի որ հողը ոչ այլ ինչ է, եթե ոչ երկրի սփերաների՝ վասափերայի (քարային պատյանի), հիդրովիերայի (ջրային պատյանի), ատմոսփերայի (օդային պատյանի) և բիոսփերայի (բուսակենդանական աշխարհի ու մարդու) համագործակցության արդյունք, առաջացած ժամանակի ընթացքում, տարածության մեջ (երկրի մակերևույթի ցամաքային հատվածներում), ուստի և մեր աշխատանքի բուն նյութը դարձել ենք հիշյալ սփերաների ազդեցության հարցը ապառների հողմահարության գործում:

Հողի առաջացման ու զարգացման գործում, երկրի ձևի, նրա մակերևույթի ձևի (ռելեֆի), ցամաքների ու ծովերի մեծության ու փոխակարգության խնդիրները, քանի որ մեծ է, այդ առումով, նրանք ևս մեր գործում գտնել են իրենց արժանի տեղը: Հայտնի է, որ արևի էներգիան ու տիեզերական այլ ուժերը ձգում են գեպի երկիրը հավասարաչափ, միայն երկրին հասնելուց հետո, վերջինիս ձևի, ռելեֆի կառուցվածքի և ծովերի ու ցամաքների ազդեցության շնորհիվ է, որ նրանք

տեսակալոր տեղաբաշխում են ստանում երկրի վրա և ստեղծում են լանդշաֆտների, նրանց թվում և հողերի բազմազանություն:

Ելնելով այդ զըսույթներից, ավելորդ չենք համարել կարևոր ակնարկներով հիշեցնելու երկույթների ամբողջական ցիկլը, որոնք բեղի են ունենում մեղ շրջապատող բնության մեջ և հանդիսանում են հողակազմության նախադրյալները:

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Երևան

15/IX—1946 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ  
ԳԱՂԱՓԾՐ ԵՐԿՐԻ ԶԵՎԻ ՈՒ ՄԵԾՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ

Աշխարհագույթյան պատմությունից մեկ հայտնի է, որ մարդը իր զարդացման տարրեր աստիճաններում տարբեր ձեռվերով է պատկերացրել երկիրը, այդ իսկ պատճառով տարբեր կերպ է ըմբռնել ու լուսաբանել նրա վրա տեղի ունեցող երեքույթները:

Մի կողմէ թողնելով մարդու ունեցած տեսակետները երկրի ձեր մասին՝ նախքան նրա երկրի գնդաձեռության զաղափարին հասնելը, անցնենք երկրի գնդաձեռության ըմբռնման և այդ մտքի հետագա էվոլուցիային:

Երկիրը իր զարդացման ընթացքում ապրել է հրահեղուկ պիճակ, ուրեմն պետք է, որ երկիրն էլ ինչպես աղատ միջավայրում ընկնող բոլոր հեղուկ նյութերի կաթիլները, ընդուներ գնդի ձեւ:

XVII դարի վերջի, XVIII դ. առաջին կեսի ուսումնասիրությունները գիտնականներին բերել են այն եզրակացության, որ երկիրը ճիշտ գունդ չէ. նա սեղմված է բևեռներում և այդ սեղմվածությունը հավասար է  $\frac{1}{297}$ . Այսպես ուրեմն, երկրի հասարակածի և միջօրեականների երկարություններն իրար հավասար չեն (հասարակածի երկարությունը հավասար է 40 076,6 կմ-ի, միջօրեականնը՝ 40009,1 կմ-ի), հետևաբար հավասար չեն նաև հասարակածային և ընեռային շառավիղները. նրանց տարբերությունը ( $6378,4 - 6356,9$ ) կազմում է 21,5 կմ. կարեռ է նաև նշել որ երկրի միջօրեականների մեկ աստիճանի երկարությունը կայուն է և հավասար է 111,3 կմ:

Բնական է, որ երկրի էլիպսոիդալ ձեր առաջացումը ունի իր հիմքը: Հայտնի է, որ յուրաքանչյուր պլաստիկ մարմին, որը պատվում է իր առանցքի շուրջը, սեղմվում է բևեռներում

և լայնանում է հասարակածում, քանի որ հասարակածում դարձանում է միծ կենտրոնակույց ուժ, ըստումներձ փոքր շրջազների շրջաններում՝ փոքր, իսկ բեռներում Օ:

Քիչ ավելի ուշ, ճոճանակիների, պատանակավոր ու պատվող կշեռքների միջոցավ կատարված երկրի մեծությունների չափումները ցույց տվին, որ երկրագունդը պատվող էլիպսոիդ էլ չէ, այլ նա պատվող էլիպսոիդին մատ, ինչ որ ձև ունի, որը հատուկ է միայն երկրագունդի համար, ուստի և երկրային մարմնին իր անունով տվին գերիդ կոչումը:

Երկրի ձևի որոշման համար կատարվող հետագա հետազոտությունները պարզեցին, որ նյութերը երկրի մակերևույթին հավասարաչափ չեն տեղաբաշխված, որի հետևանքով և նրա վրա գոյություն ունեն անհարթություններ: Չնայած այս բանին, երկրի ուելեփի դրական ու բացասական ձևերը գտնվում են ժամանակավոր հավասարակշռման մեջ և այդ հավասարակշռությունը պայմանավորված է երկրի պատյանը կազմող նյութերի անհավասար խտությամբ: Այստեղ, որտեղ երկրի մակերևույթը օվկիանոսի մակերեսույթի համեմատությամբ ըարձրագիր է, պատյանը կազմող նյութերը նուր են, իսկ ցածրադիր վայրերում ընդհակառակը: Ապացուցված է նաև, որ երկրի մակերեսույթից հաշված որոշ խորության մեջ գոյություն ունի մի զունա՞ (մոտ 100 կմ: Խորության մեջ), որի վրա մակերեսույթի նյութերը նստած են համասար ծանրությամբ, ճնշում են նրա վրա հավասարաչափ: այդ դոտին կոչվում է իդոստագիայի շերտ:

«Վերջի վերջո նորագույն չափումները բերում են այն եղբակացության, որ եթե երկիրը կանոնավոր սֆերոիդ էլ չի ներկայացնում, ապա, այնուամենայնիվ, նրա խոտորումներն այդ ձեից մեծ չեն և  $\neq 100 \pm 200$  մետրից չեն գերազանցում»:

«Երկրի իսկական ձևը, որը որոշվում է օվկիանոսներում և օվկիանոսների հետ միացած կանալներում ջրի մակերևույթով՝ շարունակված մայք ցամաքի տակ, կոչվում է գեսիրք»:  
Հատ պլոտիեսոր Ա. Ա. Իդոստագի 1946 թ: հուլիսի 6-ին  
կատարած հաղորդման, Միության Գեսպեգիայի, աերոսյոմկայի և քարտեզագրության կենտրոնական ինստիտուտի մանրագնին ուսումնասիրությունները պարզել ու պացուցել են, որ

հայտնի գերմանացի գիտնական թեսուելի ավալները երկրի ձեփ ու մեծության մասին հնացած են, որ երկրի շառավիղը 850 մետրով ավելի կարճ է, քան մինչդեռ հիմա ընդունված մեծությունն է (Բեսուելի կողմից որոշված), որ երկրի հասարակածը իրենից շրջապիծ չի ներկայացնում, այլ շրջապիծին մոտ էլիպս։ Այս հայտնագործությունը հավանական է զգալի փոփոխություններ կմացնի երկրի ձեփ ու մեծությունների ըմբռած նումների մեջ և կվերափոխի գոյություն ունեցող քարտեզները։

Բացի վերևում բերված երկրի տարրեր մեծություններին վերաբերվող տեղեկություններից, մեղ հայտնի է նաև, որ՝

1. Երկրագնդին համամեծ գնդի շառավիղը = 6371,2 կմ-ի:
2. Երկրագնդին համամեծ գնդի ծավալը = 1.083 միլիարդ կմ<sup>3</sup>-ի:

3. Երկրի մարմինը կազմող նյութերի միջին տեսակարար կէնոք հավասար է... 5,52:

4. Երկրի ընդհանուր քաշը հավասար է  $5,58 \times 10^{27}$  գր.

5. Երկրի մակերեսութիւնը մեծությունը = 510 միլ. կմ<sup>2</sup>, որից համաշխարհային օվկիանոսը կազմում է 361 միլ. կմ<sup>2</sup> իսկ ցամաքը՝

149 միլ. կմ<sup>2</sup>

տարածություն։

6. Ցամաքի միջին բարձրությունը ծովի մակերեսութիւց մոտավորապես = 825 մետրի:

7. Ծովերի ու օվկիանոսների միջին խորությունը մոտավորապես = 3800 մետրի։

Սհա երկրին վերաբերվող այն հիմնական մեծությունները, որոնք ուղղակի կամ անուղղակի աղդում են հողակազմության վրա։

### ԵՐԿՐԻ ԿԱՌՈՒՅԱԼՅԻՔ

Զեավորվող երկրին ու նրա մթնոլորտը, աստիճանաբար կորցնելով իրենց ջերմությունը, առիթ են տվել մի կողմից՝ մշուշներում տարածված նյութերի տեսակավորվելուն ու սառչելով հաջորդաբար ձևավորվող երկրի մակերեսութիւն նատելուն, մյուս կողմից՝ պայմանավորել են երկրի հրահեղուկ զանգվածը կազմող նյութերի տեսակավորվելուն ու դասավորվելուն ըստ ծանրության՝ միջուկից (ծանրից) գելի երկրի երեսը (թեթևել)։

Մազմատիկ մասսաները տարբեր ջերմության պլայմաններում սառչելով՝ մերժ գանդաղ, աստիճանաբար, մերժ արագ ծնունդ են տվել բյուրեղային, գաղտնաբյուրեղ և ամորֆ կարծր լավանիրին:

Երկրի աստիճանական, բայց անհամաշափ սառչելով (թե ժամանակի, թե մակերեսութիւն տարբեր հատվածների առումով) է պայմանավորված եղել նաև երկրի մակերեսութիւն սկզբնական ձեր առաջացումն ու նրա հետ տեղի ունեցող հետագա փոփոխությունները:

Երկրի ներքին կառուցվածքի մասին կարելի է դատել միայն ենթադրաբար, քանի որ դեռ այսօր մարդու անմիջական դիտողությանը ենթակա է միայն երկրի պատյանի 4 կմ. հաստության շերտը (արհեստական վրաված հորերից ամենախորը ունի մոտ 4 կմ. խորություն, իսկ դա չնչին մեծություն է երկրի շառավելված համեմատությամբ): Չսայած այս հանգամանքին, հորերում կատարված ուսումնասիրությունները հանդիսացել են այն բանալին, որի միջոցով պարզել են շատ գաղտնիքներ, օրինակ՝ ջերմության նկատմամբ կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել որ պատյանի միայն 13—17 մ. հաստության շերտն է ենթակա տրեմ ջերմության ազդեցության, որից հետո զոյություն ունի ջերմության անփոփոխ զոնա, իսկ նրանից ներքեւ (գեպի երկրի կենտրոնը) յուրաքանչյուր 100 մետրի վրա ջերմությունը բարձրանում է 3°-ով և ներկայ այդ գլուռնաներից, պետք է ենթադրեն, որ 60 կիլոմետր խորության մեջ երկրի ջերմաստիճանը պետք է լինի 2000 և բոլոր ապահովաները պիտի է լինեն հրահեղուկ վիճակում:

Վերջին ուսումնասիրությունները և բազմաթիվ հաշվումները ցույց են տվել որ երկրի միջին խտությունը հավասար է 5,5, այն ժամանակ, երբ երկրի պատյանը կազմով ապահովի միջին խտությունը չի անցնում 2,7: Այս կարեոր հանդամանքը ապացուցում է այն, որ երկրի միջուկում պետք է գտնվի շատ խիտ ու ծանր մասսա՝ 10 տեսակարգը կը պովի:

Երկրի ուսումնասիրությունների այս փուլը գիտնական ներին բերեց այն նորակացության, որ երկրի միջուկը կազմված է ծանր մետաղներից՝ հիմնականում նիկելից և երկաթից, իսկ վերին շերտը թեթև նյութերից՝ սիլիցիումից, ալյումի-

Նիութերից, կալցիումից, մագնեզիումից, նատրիումից և այլն, Նյութերի այսպիսի օրինաչափ տեսակավորումն ու դասավորումը, ինչպես նշեցինք, պետք է ենթադրել, որ տեղի է ունեցել, երբ երկիրը գեր գտնվելիս է եղել հրահեղութեավճակում՝ ծանր նյութերը մոտեցել են միջուկին, իսկ թեթև նյութերը տեղափոխվել են վերին շերտերը: Երկրի միջուկը գտնվելով նրա վրա գասավորված նյութերի ճնշման տակ՝ մի հոգմից, և երկրի պատյանի սառեցումից ստացվող սեղման ազգեցության տակ մյուս կողմից, չնայած իր բարձր ջերմության, պետք է որ գտնվի կարծը, բայց մածուցիկ-պլաստիկ վիճակում, ինչպես խեժը վերջինս կարող է անցնել հրահեղութեավճակի, եթե նրա վրայից վերանա ճնշումը՝ ինչպես հրարուխների ժամանակի, եթե մենք մտքով դիտենք երկրի կառուցվածքը միջուկից գեղի վերին պատյանը, ամենակենտրոնական կողնենք ծանր, կարծը մասսա—բարիսֆերան 350 կմ շառավիղով, կազմված նիկելից և ֆեռումից (հրկաթից), որի հետեանքով և նրան կոչում են «նիփե», «նիփեի» տեսակարար կշիռը գտնվում է 8-ից—10-ի սահմաններում:

Երկրի մետաղյա միջուկը շրջապատված է պերիպոտային ապառների խառնուրդ՝ ունեցող կիսամետաղյին թաղանթով—«սիմանիֆե», ով, 1700 կմ. հաստաթյամբ, 6—8 իտությամբ:

Միջուկի մետաղյանիքային թաղանթը, իր հերթին, ծածկված է մի նոր կեղևով, որն ունի մոտ 1200 կմ հաստաթյուն: Այս կեղեցը սոսորաբաժանվում է երկու ենթաշերտերի՝ ստորին և վերին: Ստորին ենթաշերտը պահանջմատ ավելի ծանր է (5—6), քանի վերինը (3·6—4): Ստորին շերտի համեմատաբար մեծ ծանրությունը պայմանավորված է նրա սիլիկատային և մագնիսիալ բաղադրությամբ: Կեղեցը, ըստ նիգելի և Ֆերսմանի, կազմված է պերիպոտիտյին ապառներից—«սիմանիփե», իսկ ըստ Գոլդտշմիդի՝ սուլֆիդ-օքսիդային ապառներից—էկլոզիտային պատյան: Ենթաշերտը է, որ նկարագրված՝ պատյանի ստորին ենթաշերտի հաստաթյունը համուռմ է մոտ 1200 կմ-ի, գտնվում է հսուն վիճակում, ուստի և կոչվում է նաև հսուն բաղադրային զանա: Պատյանի վերին, կարծը ենթաշերտին բաժին է մնում 60—120 կմ. հզորություն, որը կազմված է սիլիցիու-

մից և ալյումինիումից, ունի 2,8 խտություն և կոչվում է «սիլվր»՝ կամ լիտոնիքերա (քարային պատյան):

Երկրի քարային պատյանի առաջանալուց հետո անցել է 1,5—2 միլիարդ տարի. այդ ժամանակի ընթացքում, ներքին և մասնավորապես արտաքին գործոնների ազդեցության տակ (օդի, ջրի, արեգակի էներգիայի), լայն չափերով քայլայիլ է քարային պատյանը, առաջացել են կլաստիկ (բեկորային) ապառներ՝ ավագ, կափ, կիբ, մերգելներ, լյուսեր և այլ քիմիական նյութեր, որոնք ծածկել են երկրի մակերեսութիւնը՝ մոտ 90—95%:

Գլխանականները ուսումնասիրելով երկրի պատյանի նըստավածքային շերտերը, պարզել են նրանց բնույթը տարբեր տեսանկյուններից և խմբավորել են նրանց՝

1. Քստ կաղմության. կոնգլոմերատներ, բրեկաներ, առվազաքարեր, կավեր, մերգելներ, կլաքարեր (շաղախոված ամրացած նստվածքային ապառներ), ավազներ, լյուսեր և այլն:

2. Քստ առաջացման վայրի. ծովահատակային, լճահատակային, ցամաքանիստ (հեղեղատային, գետավազանային—ալլյուվիալ) և այլն:

3. Քստ ապառների քայլայման բնույթի. մեխանիկական, քիմիական, օրդոնոգն քայլայման նյութեր:

4. Քստ նստվածքներն առաջացնող գործոնների, արբաշիքն (ծովափնյա, լճափնյա), էկզարացիոն (սասցաղաշտային), ֆլյուվիո-գլացիալ (սառցաջրային), ալլյուվիալ (գետային) և այլն:

5. Քստ նստվածքների առաջացման ժամանակաշրջանի հասակի (տես նստվածքների առաջացման գեոլոգիական խըռնողիան, (էջ 11-ում):

Յուրաքանչյուզ էպոխան էլ ունի իր հարկերը, հարկերը՝ Փացիաները և շերտերը, որոնք հայտնի են այս կամ այն նըստավածքային ապառատեսակներով, բայց խուսափելով մասնաւմանություններից, մեջ չենք բերում:

Բնական է, որ այդպիսի երկար գեոլոգիական ժամանակաշրջանում ոչ միայն փոխվել են երկրի մակերեսույթում աեղի ունեցող մայբական ապառներ առաջ բերող քիզիկուքիմիական

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՅԼՈՒՐ

ալլոցեսները, այլ և հանդես են եկել նոր գործոններ՝ բխողենեւ-  
տիկական տարրեր աղդակներ, ոլոնք համագործակցելով երկրի  
մակերեւոյթի վրա տեղի ունեցող ֆիզիկո-քիմիական պլոցես-  
ների հետ, ոչ միայն նախապատրաստել են ապաները հողի  
առաջացման համար, այլ և սկզբ են դրել հողակազմության

Երկրորդային ապաները (նստվածքային), որոնց վրա ա-  
ռաջանում են հողերը, արդյունք են գեղողիական պատմության,  
այդ իսկ տեսակետից, մեզ հողագետներիս հետաքրքրում է  
նրանց հասակը, քանի որ հողերի զարգացման տարրեր աստի-  
ճանները արդյունք են բուն հողակազմական պլոցեսների և  
հողակազմության նախապատրաստական շրջանի անողության

Երկրի տարիքը և հողի հասակը որոշելու համար գիտնա-  
կանները ենում են մի քանի նախազգյալներից՝ ապիուակափ  
նյութերի քայլայումից սաացվող նյութերի քանակից և նրանց  
քայլայուման համար պահանջվող ժամանակամիջոցից, ապաստ-  
շերերի հաստությունը և նրանց կուտակման համար պահանջ-  
վող հասրավոր ժամանակից, նստվածքային շերտերում հայտ-  
նաբերված բրածոների (բուսական և կենդանական աշխարհի  
քարացած մնացորդների և հետքերի) էվոլյուցիայի համար պա-  
հանջվող մոտավոր ժամանակաշրջանից և այլն: Ինչ վերաբե-  
րում է բուն հողի հասակին, որպես ուղեցույց ծառայում են  
այն օտարությունը (աղյուսի, կալե ամանների, ապակու,  
ոսկի, զենքի, զարդարանքների և այլնի մնացորդները—ներ-  
փակները), որոնք հողակազմության հետ կապ չունեն, բայց  
արդյունք են բունության և մարդու զարգացման տարրեր առ-  
տիճանների:

Հյուսիսային կիսագնուում ընդհանրապես, և մեզ մոտ  
ՍՍՌԱռում՝ մասնավորապես, հողերի զարգացման ընթացքի մեջ  
հիմնական բեկում է մտել հետերընդգական՝ չորրորդական  
(պլեյսոոցին) գարաշընուում: Հայտնի է, որ չորրորդական  
ժամանակաշրջանում մեր լայնածավալ Հայրենիքի մեծ մասը  
(Հյուսիսային շրջանները) բազմիցս (չորս, երեք, երկու)  
առացապատճել ու սառցից ազատվել են: Սառույցները առաջ  
ու հետ շարժվելով սրբել են իրենց ճանապարհն. ընկած  
հողերը և առաջացըրել են նոր նախավածքներ և նախադրյալներ  
սահեղել նոր հողակազմության համար: Սառցարերուկ  
ների համատարած ծածկություց դեր են մնացել միայն

Միջին և Ստորին Պովոլժյան, Պոգոլյան շրջանի, Դոնի ավազանի որոշ մասերը, լեռնային վայրերի այն տեղանքը, որտեղ արգյան սասցապատումները չեն ընդգրկել, Այս տեղանքում է միայն, որ մենք հանդիպում ենք երրորդական և նախաերրորդական վարաշրջանների ապահովության որպես հողակազմիչների:

Փաստացի երկրի պատյանի ամենավերին շերտում միայն սասցապաշտային նստվածքներ չեն, որ հանգես են գալիս. բացի նրանցից հսկայական տարածություններ են բանում նաև նուրագույն էոլային (քամերեր), ալլյուվիալ (գետարեր) նստվածքները, լեռնային ու նրանց հարակից շրջաններում մեծ տարածություն ունեն էլյուվիանները (կլաստիկ ապահովության կուտակվածքները լեռնալանջերում, որոնց միջից տեղատարգություն մանրանողը), դելյուվիալ նստվածքները (լեռնալանջերի ու փեշերի նստվածքները, որոնք առաջացել են լանջահոս ջրերի ու երկրի ձգողություն շնորհիվ տեղաշարժ եղած հողմնահարված ապահովության համար), պրոլյուվիալ նստվածքները, որոնք առաջացել են լեռների ստորոտներում վայրի, սահմարձակ ջրի կենդանի ուժի մարելու հետեանքով: Իլյուվիալ նստվածքները՝ այն կուտակվածքները, որոնք առաջացել են լայն գոզավորություններում՝ տարեր տեղերից բերված նյութերի կուտակումից (ներլվացնումից), կոլյուվիալ նստվածքները՝ հեղեղատների հունի բնեկման շրջաններում (թեքվածքների փոքրացման վայրերում առաջացած կուտակվածքները, արտավիճման կոները, հեղեղատների բերանից գուրս աարածված կոնաձև նստվածքները և այլն:

### Հ Ի Դ Բ Ո Շ Ֆ Ե Ր Ա

Լիտոսֆերան համատարած ծածկույթ չի կազմում երկրի երեսին: 510 միլիոն քառակուսի կիլոմետր երկրի մակերեսութիւնը 361 միլիոն քառակուսի կիլոմետր ծածկված է ջրով, այսինքն երկրի մակերեսութիւնը՝ 710° օ-ը ջրային է, իսկ 290° ը՝ ցամաքային:

Ջրային սգիրան լցնում է երկրի մակերեսութիւնը՝ գոզավորությունները անհամաչափ տեղաբաշխվելով նրա վրա—հյուսիսային կիսակնդում նա կազմում է 155,55 միլ. քառ. կիլո-

մետր—կիսագնդի մակ-ի 61<sup>0</sup>/<sub>0</sub>, իսկ հարավային կիսագնդում՝ 206,55 միլ. քառ. կմ, կամ 81<sup>0</sup>/<sub>0</sub>, Զնայած ջրային տարերքի նշված գերազանցության (տարածության առումով), համենայն գեպս նա կազմում է երկրի պատյանի քաշի միայն 6,9<sup>0</sup>/<sub>0</sub>:

Հիդրոսֆերան առաջացել է երկրի սառեցման այն աստիճանում, երբ պատյանի ջերմությունը ցածր էր ջրի կրիտիկական չերմությունից:

### Ա. Տ Մ Ո Ս Ֆ Ե Ր Ա.

Երկրի վերջին սփերան մթնոլորան է, որը իր հերթին կազմված է երկու շերտերից՝ արոպոսֆերայից և ստրատոսֆերայից: Տրոպոսֆերան մթնոլորաի երկրի մակերեսույթի հետ շիման մեջ գտնվող ենթաշերտն է, իսկ ստրատոսֆերան վերին շերտն է: Տրոպոսֆերայի վերին և ստրատոսֆերայի ներքին սահմանը միջին հաշվով համարում են 11 կիլոմետր, բարձրությունը ծովի մակերեսույթից հաշված: Զնայած այդ սահմանը բնենուային շրջաններում իջնում՝ հասնում է ընդամենը 8—10 կմ, իսկ արևադարձային երկրներում՝ բարձրանում է մինչև 16—18 կմ-ի, Միջին Եվրոպայում տրոպոսֆերայի վերին սահմանը գտնվում է 11—12 կմ բարձրության վրա:

Ստրատոսֆերայի վերին սահմանի մասին կարելի է խոսել միայն պայմանականորեն: Այսպես օրինակ՝ արշալույսի և վերջալույսի երկույթները հանդես են գալիս 70 կմ բարձրության վրա, այսինքն 70 կմ բարձրության վրա օդը դեռև այնքան խիտ է, որ կարող է ցրել արեգակի ճառագայթները—ուրեմն կարող է իր ֆիզիկական ազդեցությունն ունենալ երկրի վրա:

Հյուսիսային կիսագնդում արծաթափայլ ամպերը ամառը երբեմն երկում են 80—85 կմ բարձրության վրա: Այս երեսույթը ևս ցույց է տալիս, որ գեր 80 կիլոմետր բարձրության վրա հնարավոր է նյութերի զգալի խտացում՝ կուտակում (կոնդենսացիա):

Ընկնող աստղերը՝ ասուպները (երկնային քարերը) մոռակնալով երկրին, շփվում են երկիրը շրջապատող ատմոսֆերայի հետ և ոկտում են շիկանալ 100—200 կմ բարձրությունից, սա

ևս ապացույց է այն բանի, որ այդ բարձրություններում մթնուզորտը դեռ ևս այնքան խիտ է, որ կարող է դիմադրել՝ ընկնադմարմբններին, և շփփելով նրանց հետ, շիկացնել նրանց:

Ահա այս երեսոյթները և մի շարք այլ ֆիզիկական երեսոյթներ, որոնք իրենց քիչ թիւ շատ ազդեցությունը կարող են ունենալ երկրի մակերևույթի վրա, պայմանավորում են տրուլուֆերայի բարձրությունը—70—100 կմ։

Երկրային մթնոլորտը 70 կիլոմետրից զգակի նոսրանում է և զրանից հետո աստիճանաբար նոսրանալով կարծես 1000 կիլոմետր բարձրության վրա, բոլորովին անհետանում է։ Որպես Ապացույց այդ բանի կարող է ծառայել այն, որ դեռևս 700—800 և անգամ 1000 կիլոմետր բարձրության վրա մենք տեսնում ենք ֆիզիկական երեսոյթների առաջացման որոշ տարրեր, օրինակ հյուսվափայլի առաջացումը, իսկ այդ սահմաններից այն կողմէ կարծես նյութը զոյսէջուն չունենա, այսինքն այնքան նոսր է, որ դիտողության ենթակա չէ, եթիւ հաշվի չառնաք արեի ճառագայթների և այլ լուսատուների էներգիայի անցումը ամենաբարական տարածությունով։ Այս հանգամանքը պատճառ է զանոնում ստրատովիերայի սահմանը պայմանական կերպով ընդունելու 1000 կմ բարձրության։

Ի՞նչպիս սեսանք, տրուլուֆերան ավելի սերտ է կապված երկրի հետ, քան ստրատովիերան։ Տրուլուֆերայում են ծնվում հղանակներն ու կլիման, տրուլուֆերայում առաջացող երեսոյթներն են հիմնականում պայմանավորում երեսոյթները երկրի մակերևույթում։

Տրուլուֆերայի նյութական բազան հանդիսանում է օդը, որը կազմված է հետեւյալ գաղերից։

Աղուից	78,08%
Թթվածնից	20,94%
Արգոնից	0, 94%
Ածխաթթվից	0,03%
Ջրածնից	0,01%

Բացի մթնոլորտի այս հիմնական տարրերից, նրա մեջ են մտնում աննշան չափերով նաև նեոնը, հելիումը, կրիոլունը և քսենոնը։

Որքան բարձրանում ենք մթնոլորտի վերին շերտերը, այն-

քան ծանր գաղերի քանակը աստիճանաբար ընկնում է՝ զրան  
հակառակ՝ թեթև գաղերի քանակը (տոկոսային փոխարարերու-  
թյան առումով) մեծանում է:

Ենթադրվում է, որ 60—70 կիլոմետր բարձրության վրա  
աղոտի քանակի անկումը կատասրովիկ բնույթ է ընդունում  
և 100 կմ բարձրության վրա արդեն մթնոլորտում թեթև գա-  
ղերը՝ ջրածինը, հելիումը կազմում են մթնոլորտի 95%՝

Բնական է, որ մթնոլորտի բաղադրիչ գաղերը, նրանք,  
որոնք գերակշռում են օղում և ինդիֆերենտ (անտարբեր) չեն  
(թթվածին, ածխաթթվական գաղ), հսկայական գեր են կատա-  
րում երկրի պատյանի քիմիական և բիոքիմիական փոփոխու-  
թյունների գործում: Մյուս գաղերը կատարում են բարատի-  
գեր, մեծ չափով իրենց վրա են վերցնում երկրի մակերեսութին  
կատարվող ֆիզիկո-քիմիական պրոցեսները և որոշ պայմաններում  
մասնակցում են նաև քիմիական պրոցեսներին (աղոտ, ջրածին և  
այլն):

Ստրատովերայի գաղային բաղադրության վրա կանգ  
չենք առնում, քանի որ նրանց գերը հողակազմության մեջ  
տնմիջականորեն հանդես չի գալիս: Եշնք միայն, որ ստրա-  
տովերան կազմված է թեթև գաղերից՝ հելիումից, նեռնից,  
կրեպտոնից և ստորին շերտերում նաև ջրածնից:

Ինչպես երկիրն ամբողջովին, այնպես էլ ատմոսֆերան  
միշտ չէ, որ հանգես է եկել այն վիճակում, ինչ վիճակում նա  
գտնվում է այսօր: Բնական է, որ ատմոսֆերայի ֆիզիկական  
հատկությունների փոփոխության հետ միասին, փոփոխվել է  
նաև նրա գերը երկրի մակերեսութում կատարվող պրոցեսների  
մեջ:

Ատմոսֆերան երկրային գանգված կազմող մասսաներից  
անջատվում է միայն այն ժամանակը, երբ այդ մասսաների  
ջերմությունը ընկնում՝ հասնում է 1000—1500° (ապառների  
հալման աստիճանը) և նրանք անցնում են հրահեղուկ վիճակի:

Այն ժամանակ երկրի ատմոսֆերան նման չէր աչ այսօր-  
վա ատմոսֆերային և ոչ էլ ներկայի արեի ատմոսֆերային:

Հստ Արքենիուսի, երկրի այն ժամանակի ատմոսֆերան  
կազմված է եղել ածխաջրածնից, ցիանից, ածխածնի օքսիդից

(CO), աղոստից, թթվածնից, ջրածնից, հելիումից և քորից:

Երբ մթնոլորտի ջերմությունը իջնում է 1000°-ից (ջրի քայլայիման կրիտիկական մոմենտ), մթնոլորտում թթվածնի և ջրածնի միացումից առաջանում են ջրի մոլեկուլները:

Երբ մթնոլորտի ջերմությունը իջնում, համարմ է 365° (ջրի գոյսթյան կրիտիկական աստիճանը), ջրի մոլեկուլները կոնդենսացիայի են ենթարկվում (կուտակվում—խանում են)։ օրի իսկիդացած մասնիկների շուրջը և առաջացնում են զննարշու ամպեր: Սծխածնի օքսիդը (CO) տածը ջերմաստիճանի պայմաններում կապվում է նորից մեկ թթվածնի հետ և առաջացնում է ածխաթթու զազ (CO<sub>2</sub>): Ցիանը տարրալուծվում է իր բաղադրիչ մասիրին և առաջին է ամյալի: Հելիումը աստիճանաբար հեռանում՝ սփակում է տիեզերական տարածության մեջ: Այսպիսով գոտիվում է մթնոլորտը և իր բնույթով մոահնում է երկրի ներկա մթնոլորտին:

Եթե երկրի մակերեսութիւնը ջերմաթյունը իջնում է 100°-ից, մթնոլորտում առաջացած ջրային գունդվածները տսատիճանաբար տեղափոխվում են երկրի մակերեսութիւնի վրա, առաջացնում են հեղեղներ, գետեր, սուրբերկյա ջրեր, որոնք հոսում են զեղի մակերենիվոյցի գոգավորությունները, կազմում են լճեր, ծովեր, օվկիանոսներ, ավելի ուշ նաև սաղագալտեր:

Երկրի մակերեսութիւնը թափվող ու անտեղից գոլորշիացող ջրերը իրենց հերթին հապատակում են երկրի պատյանի առաջացնելուն ու կարծրանալուն և նրա հետագա զարդացման գործին:

## 2. ԵՆԴՈԳԵՆ ԵՐԵՎՈՒԹՅԵՐՆԵՐԸ ԵՎ ԵՐԿՐԻ ՌԵԼԵՖԻ ՄՈՒՏԱՑԻԱՆԵՐԸ

Երկրի ոելեֆի առաջացումն ու զարդացումն ես, ինչպես բնության բոլոր մյուս երևույթները, ընթացել է երկու խումբ հակադիր ուժերի պայքարի նշանաբանի տակ: Գործել են էնդոգեն (ներքնածին-ընդգերքային) ուժերը, սրանց հակադրվել ու գործել են նաև եկզոպեն (մակածին-արտաքին) ուժերը և ահա այս երկու խումբ ուժերի համատեղ, բայց հակադիր գործունեության շնորհիվ առաջացել է երկրի ոելեֆը և ցիկլ առ



թեկը\* (Մբջան ու Մբջան), օրինաչափ պարբերությամբ\*\* վուգովա-  
վելով հասել է մեր օրերը:

Երկը սեղքի զարդացման տասնյին օրերում\*\*\* Էնգողեն  
ուժերի դերը անշատ մեծ էր, իսկ արտաքին ուժերինը \*\*\*\*  
անշափ փոքր Այս իսկ պատճառով երկրի մակերնույթն ապրում  
էր աճվերջ... արագ մուտացիաների (հեղաշրջումների) կյանքով:  
Դադարի կամ ժամանակավոր կարծեցյալ հավասարակշռության  
շրջաններ կարծես գոյություն չունեին կամ անշափ կտրճ էին:  
Եռում էր երկրի հրահեղութեամսան՝ մեկ բռնկումը հաջորդում  
էր մյուսին—շիկացած մասսաների մեկ հսկայական հորձանքը  
փախարինում էր մյուսին:

Աստիճանաբար էնգողեն ուժերը նահանջում են զարդացող  
էլեկտրի ուժերի առաջ, նըսույթների մեջ ստեղծվում են համեմատական զարդարի շքանաներ: Երեսությունը էլուզոցիան (դանդաղ աստիճանական փոփոխությունները) դառնում են տեսական, իսկ մուտացիաները (թուիքային փոփոխությունները) սակագի Այսպես՝ բնությունը ձգտում է դեպի հարատես հավասարակշռության:

Կոնկրետ, երկրի պատյանի և ռելէֆի ձևերի առաջացման նախօրին մեզ պատեհերավորվում է այնպիսին, ինչպիսին է ներկայումս արեգակի մակերնույթի վրա տնդի ունեցող պրոցեսները, միայն անշափ փոքր մասշտարներով:

Երկիրը կորցնելով իր ջերմությունը, ձգտում էր փասակալման և նոր առաջացող փառի կայունացման: Բայց երկրի հուզվող, եռացող մասսաները համառ ու հարատես պայքար էին մղում իրենց հակառակող ուժերի դեմ՝ ջերմության կորստի:

\* Անհջող, բայց ամբացած զարձվածք է: Բնության երևույթները պարզանում են ոչ թե շըանի, այլ եւեպսի պարագծով:

\*\* Բնության երևույթները ունեն պերիոդիկ (օրինաչափ պարբերության) բնույթ՝ դիշեր, ցերեկ, զարուն, տմառ, աշուն, ձմեռ, տարվա շոր և խոնավ շըաններ և այլն:

\*\*\* Պեսք է հասկանալ բյուր միերոնափար տարիներ:

\*\*\*\* Ներքեն և արտաքին ուժերը նույնը չեն ինչ այսօր. որպես պատաքին ուժեր հանդիս են զալիս զաղերի առաջդականությունն ու մնացումը, շիկացած զաղերի մըրիկները, միջամածության մեջ ձևավորվող նյութերի տարափը...

շնորհիլ առաջացող սերի (փառի) ու նըա առաձգականության գեմ, որն իր գիմադրությամբ աշխատում էր հանգըստացնել հուզվող մասաներին:

Աստիճանաբար զարգացող թաղանթի տակ գեռ շատ երկար ժամանակ (միլիարդ տարիներ) եռում, ալիկոծվում էր հրահեղուկ մադման: Վերջինս մերթ ընդ մերթ այս ու այնտեղ պատաստում՝ լաթերի էր վերածում հաղիվ տռաջացած երկրաշին թաղանթը, կանում լափում էր նրան մինչև այն ժամանակ, երբ փառը նորից ու նորից առաջանարկվ աստիճանաբար լայնանում, բանում է երկրի երեսը ամբողջովին ու դիմադրության որոշ բազա է ստեղծում հուզվող մասաների գեմ:

Դեռ այս գեպքում ևս երկրի փոթորկող հեղուկ զանգվածները չեն քաղաքում դործելուց, նրանք ալիւարում են փառը, որոշ տեղերում նորից պատում են նրան, նորձանք են տալիս հարյուրավոր ու հազարավոր կիրոմետր բարձրությամբ, մի տեղից թուզում են մյօւսը, կազմում կամբջակներ, նասում են փառի վրա, երբեմն սառչում, առաջացնում են բարձրություններ, երբեմն նատում՝ փռվում, հավասարվում են փառի մակերևութին: Իր գոյությունը պաշտպանած թաղանթը աստիճանաբար հաստանում, ամրանում, կարծրանում է և սանձանարում է իր տակ ամփոփած հեղուկ մասաներին:

Երկրի զատյանի զարգացման երկրորդ փուլում ևս, երբ տռաջանում է մազմայի բարակ սառած շերտ, վերջնականապես չեն մարում էնդոքտին ուժեղը, բայց հանդես են զալիս նոր ձեփերով և ստեղծում են նոր որակ:

Բանի գեն չէր կարծրացնել երկրի բարակ պատյանը, նա սառչելուց միայն կծկվում էր, կամ կծկման սահմանն անցնելուց սեղմվում, կնճռութում էր երկրի երեսը: Ճկուն (ալլաստիկ) և առաձգական (էլաստիկ) բարակ պատյանը մազմայի ու գաղերի ճնշումից ձգվում էր, նորից կրճատվում՝ ծալվում իրար վրա և այլու երբեմն ուժեղ լարումից երկրի կեղեց պատռուվում էր և պատռվածքները նորից ձուլվում էին: Բացառիկ գեպքերում, կեղեցի պատռվածքներից դուրս լիժած հոսուն լավան կուտակված մնում էր ճկուն պատյանի վրա և ամրանալով ստեղծում էր բարձրություններ:

Պատյանի պլաստիկ շրջանում, նըա վերաձեավորման գործում, ըստ երկույթին, նշանակալից գեր էին խաղում նաև

հարատես մակընթացության երեսոյթները, որոնց պատաճառով  
մասսաները ձգվում, պոկլում էին երկրից և ձգող լուսատուիք  
երկրից հետանալու գեղքում նորից նստում էին երկրի վրաւ  
Գետը է նշել, որ երկրի պատյանի պարզացման այս փու-  
փ վերջին շրջանում, չնայած ուելիքի նախկին ձեւը (սփերիկ)  
վերականգնող գործոնները (երկրի ձգողական ուժը, պատյանի  
ձկունությունն ու առածզականությունը) դեռևս մեծ ուժով են  
հանգիս գալիս, բայց ուելիքի նոր ձեւը ստեղծող ազդակների  
թափի գերազանցության պատճառը վերածեալոր-  
վում է:

Երկրի պատյանը կարծրանալով և զգուի հաստություննե-  
րի հասնելով կորցնում է իր առաձգականությունն ու պլաստի-  
կականությունը: Պատյանում զարգանում է նոր ունակություն՝  
որտաքին ուժերին մեծ չափով գիշադրելու, հակառակ գեղքում  
բեկվելու, քայլացվելու:

Սյադիստիկ, երկրի պատյանի ամբանալուց հետո (մանավանոք  
առաջին շրջանում) շարահյուսվաւմ են պատյանի պլաստիկա-  
կանությունը և բիկման ունակությունը, և քանի որ պատյանը  
չերմության կորստի ու ջնուացման անհամաշափ պայմաննե-  
րում, տարբեր մասերում, տարբեր չափերով էր կարծրացել ու  
հաստացել ընդունակ է զանոնում նոր կատաստրոֆաների՝  
նոր ուժերի ազդեցության ներքո:

Ուելիքի զարգացման նոր փուլի շարժիչ ուժերի նկատ-  
մամբ գիտնականների տարբեր խմբեր տալիս են տարբեր բա-  
ցարություններ: Գոյություն ունեցող տեսակետներից ամենա-  
տարածվածը կոնտրակայցիլոն տեսությունն է:

Հստ կոնտրակայցիլոն (սեղմում) թեորիայի, երկիրը աստի-  
ճանաբար կորցնում է իր ջերմությունը և այդ պատճառով  
փոքրանում է ծավալում: Երկրի տարբեր շերտերի քարային  
պատյանի և գաղերով հարուստ հեղուկ միջուկի սեղմումը  
տեղի է ունենում անհամաշափ: Միջուկը քարային պատ-  
յանի համեմատությամբ շատ ավելի սեղմվելով անջատվում է  
նրանից և զրանով իսկ հնարավորությունն է ստեղծում բեկո-  
րահատվող պատյանի կտորների նստելուն: Դեպի միջուկը ձըգ-  
տող պատյանի հատվածները ձնշում են գործ դնում պատյանի  
տակ կուտակված զարային և մազմատիկ զանգվածի վրա, իսկ

զերջինս իր հերթին մեկ ուրիշ տեղում ճնշում, ուղղաձիգ բարձրացնում է մեկ ուրիշ բնկոր: Այսպիսով տեղի է ունենում ռազիալ շարժում:

Նստող ու բարձրացող պատյանի բնկորները ճնշում են իրենց հարաւան բնկորների վրա, այնպես, ինչպես կամարակապ շնչքի գագաթնային քարերը իրենց հարեւան քարերի վրա, որի հետևանքով և առաջանում է կողային—տանգենցիալ ճնշում:

Տանդինցիալ ճնշման հետևանքով երկողի սեղմող պատյանի հատվածները ծալքալորիվում են և առաջացնում ծալքավար լեռներ, իսկ խզումների գեղքում՝ իջվածքներ ու բարձրացումներ:

Հաշվումները ցույց են տվել, որ երկը մակերեսութիւնը բռնը անհարթությունների, ժամանակակից ցամաքների, կղզիների, լեռների ու բարձրությունների առաջացման համար բավական էր, որ երկը շառավիզը կը ճառի 261 կիլոմետրով: Հաս Ս. Ա. Յակովեվի յուրայի լեռնակազմության շնորհիվ երկը շառավիզը կը ճառի է 5 կմ, իսկ Ալպյան լեռնակազմության շրջանում՝ 120 կմ:

Դիտնականների մեկ ուրիշ խումբ երկրի պատյանում տեղի ունեցող տեկտոնական\* փոխազդեցությունների պատճառը տնանում են նրանում, որ իր երկրի միջաւկը տափինանաբար կարգնելով իր ջերմուրյունը, սեղմվում ու անջատվում է պատյանից և պատյանը իր ծանրության շնորհիվ իշեցումներ և տալիս:

Դիտնականների մի ուրիշ խումբ ցամաքակազմության ու նրա ուկեֆի ձևավորման ու վերածեավորման պատճառը համարում է իզոսապիայի երկույթները: Վերջիններիս կարծիքով երկրի պատյանում տեղի ունեցող ջարժումների գրգապաճառն այն է, որ պատյանի տարբեր մասերն ունեն տարբեր խտություն, բազագություն, հաստություն, այդ պատճառով այն տեղերում, որտեղ պատյանը ծանր է, իշնում և առաջացնում է ցածրություններ, իսկ դրան հակառակ՝ թույլ խտության շրջանները բարձրանում ու տալիս են ուսուցքներ, ձգտելով ստեղծելու հավասարակշռություն: Բայց պատյանի հավասարակշռությունը միշտ խախտվում է որոշ մոմենտներից հետո: Ծեկեփի գրական տարբերեցից նյութերը քայլքայլում՝ տեղատարփում են և

\* Պատյանի բարը տեսակի ձևավորումներն ու վերածեավորումները:

**Կուտակվում** օվկիանոսների ու ծովերի աղափնյա շրջաններում: Նստվածքների առաջացման վայրում պատյանը ծանրանում է և դրան հակառակ՝ տեղատարման շրջանում պատյանը թեթևանում է և համեմում այնպիսի մամնաւի, որ պատյանի ժամանակավար կարծեցյալ հավասարակշռությունը նորից խախտվում է և վերջնական հավասարակշռում չստեղծված՝ նոր ծալքեր են առաջանում բեկման շրջաններում և այդպես շարունակ:

Անհրաժեշտ ենք համարում մեկ տնզամ ևս նշելու, որ ինչպես բոլոր ընական երկույթներում, այնպես և իզոստագիացի մեջ ընդգծված հաճդես են զալիս երկույթների անվերջ զարդացման մոմենտները, Մեկ երկույթ ծնվում է մյուսի ծոցում Քանակական փոփոխությունները առաջ են բերում որպական փոփոխություններ:

Փոփոխություններ առաջ բերող պատճառները որոշ մոմենտից մեռնում են՝ բացասվում, իսկ հետևանքը որպես նոր պատճառ, ընդհակառակը, նոր թափ է ստանում՝ դրագանում... և հակասությունների միասնության պայքարի հետևանքով շարժումը գառնում է անվերջ. կյանքը առաջ է ընթառնում:

Եպերոգենետիկ երկույթները բացատրող ակտություններից հետաքրքրական է նուև Զոլիի սագիուակտիվ թեորիան, ըստ որի պատյանի շարժումները պայմանավորվում են նրա մարմինը կազմող սագիուակտիվ նյութերի տարրալուծումով:

Նախորդ զլուխներից մեկ արգեն հայտնի է, որ երկրի պատյանի վերին շերտերը կաղմված են սիլիկատային թթու ապաներից, իսկ ներքին շերտերը հիմքային՝ բագալտային ապաներից: Թե առաջին խմբի և թե երկրորդ խմբի ապաները պարունակում են իրենց մեջ ռազմիուակտիվ նյութեր (ուրան, թորիում, ռադիում և ռուբիոնը):

Հայտնի է, որ ռազմիուակտիվ նյութերը հնթարկվում են ինքնաքայլացման և տրտագրում են հսկայական ջերմություն:

Մեկ գրամ բազալտը պարունակում է իր մեջ  $1,10 \times 10^{-12}$  գրուազիում և  $0,8 \times 10^{-5}$  գր. թորիում: Ըստ Զոլիի, նշված քանակի ռազմիուակտիվ նյութերի քայլացումից, որը անդի է ունենում մեկ միլիոն տարում, ստացվում է 3,46 կտրոքիա ջերմու-

թյուն Այս երկու լիտով բացատրվում է այն, որ չնայած երկիրը պատիճանարար հասագայթում է իր ջերմությունը տիեզ երական տարածություն, այսուամենաշնիք 48 կմ խորության մեջ՝ բաղադրային ներքնակի ջերմությունը 1050°-ից ոչ միայն չեղանակում, այլ և, ըստ երկութիւնի, բարձրանում է 1050°-ը, որը ընդունվում է բազալտային հիմքի ջերմության համար, միայն 100°-ով է զանք՝ նրան հրահեղուկ վիճակի փոխազրկելու համար և պահանջվում է ընդամենը 113 կալորիա ջերմություն, որովհետի բաղադրի ջերմությունը համար 1150°-ի և նա անցնի հեղուկ վիճակին Յանախով, ըստ Զոլիք տեսության, անհրաժեշտ է 33 միլիոն տարի (113: 3,46= ~33), որպեսզի բազալտում եղած սաղիուակարի նյութերի քայլայումից ստացվի այնքան ջերմություն, որ բազալտը կարծր վիճակից անցնի հոսուն՝ հեղուկ վիճակի:

Խչպես բոլոր մարմինները, այնուհետև էլ բազալտը տաքությունից լայնանում է և փոքրացնում է իր տեսակարար կշիռը՝ լայնանում է նաև ցամտքի գրանիտային հիմքը, բայց շատ տիեզի պակաս, քան օվկիանոսի հատակը կազմող բազալտային տվյալները թաղիրակարի նյութերի անհամաշատի քայլայման հետաքանի այն է լինում, որ համեմատարար ծանր մնացող ցամքային զանգվածները խորառությունը են հեղուկ բազալտային հիմքի մեջ և առաջացնում են ցածրություններ։ Օվկիանոսների ջարուց աեղաշարժվում է և լցնում նոր առաջացած իջևոնքները։ Օվկիանոսների հատակի բազալտային հիմքը տաքությունից ծգվում, լայնանում, ուռչում է և սեղմակելով հոկառակ ուղղությամբ թույլ լայնացող ցամտքի գրանիտային հիմքին, ծալքավորվում և առաջացնում է առաջինյան լուսներ։

Որոշ հոռավածներում օվկիանոսների հատակները ձգման-լարման չեն կորուզանում գիմազրել պատուվում են և առիթ զառնում լովոյի արտաքիժման։

Երկրի պատայանի ըուզալտային ներքնակը այս աեղաշարժերի վրա ծախսելով իր կոռատակած էներգիան, նորից սկսում է սառչել՝ սեղմակել և ալիքավորված օվկիանոսի հատակի ծալքերը մեծացնելը։

Երկրի պատայանի շարժումների յուրաքանչյուր 5իլլը հե-

տեղյալ պիկլից սահմանադատվում է դադարի ժամանակաշըր-  
ջանով, որի ընթացքում տեղի է ունենում ջերմային էներգիայի  
կուտակման համապատասխան քանակ:

Սհա այսպիս են բացարում Զոլին և նրա կողմանակից-  
ները երկրի պատյանում տեղի ունեցող տեկտոնական երե-  
վույթները: Սբանով են բացարում նաև երկրի ու արերի ջեր-  
մության թույլ կորուսով ու գանգաղ սառչելը:

Արերի անչափ զանգաղ սառչելը, այս տեսությունով կար-  
ծես իր ճիշտ բացարությունն է գտնում, չնայած նա յուրա-  
քանչյուր տարի կորցնում է իր ջերմությունից  $3,8 \times 10^{13}$  կա-  
լորիտ թերեւ գուցի արերի գանգաղ սառելուն նպաստում է նաև  
արեգակնային մասսաների սեղմումից առաջացող ջերմու-  
թյունը:

Մեր կարծիքով, երկրի տեկտոնիկային վերաբերող, վի-  
րեռում բերված երկր էլպոթեկներն եւ բշենց հիմքերն ունեն և  
անջատանջատ չեն գործում ինչպես նախատեսնված է հիպո-  
թեղներում, ուստի նրանց պիտք է զիտել փոխգործունեության  
մեջ:

### Եպիյրագենեզիա\*

Երկրագնդի ներկա պատկերի ստեղծման գործում առա-  
ջատար զերում են եղել էպիյրագենեզիկ պրոցեսները կամ  
երկրի պատյանի հատվածների գարագոր տատանութները:

Երկրի պատյանի սառչելու հետևանքով, մասնավորական ան-  
հավասարաչափ սառչելու պատճառով առաջացել են նրանց մեջ  
պատուիվածքներ: Պատյանի մեծ ու փոքր, տարրեր հաստության  
ու խտության բնիորները նստում են մազմատէկ մասսոյի վրա  
ու լողում են այսպիս ինչպես սառցուգաշերը բնեռային ծռ-  
վերում:

Սկզբնական շըջանում քանի ուրա մազման հեղուկ էր (ջեր-  
մության բարձրության ու նրա վրա եղած ճնշման թուլության  
պատճառով), պատյանի բնիորները, մազմայի հուզումների պատ-  
ճառով, կուտակվում են՝ իրար վրա անկանոն թմբային (տոսո-  
սանման) անհարթությունների ձևով, իսկ երբ կուտակման

\* Հունաբին - ցամաքածակում:

պլուցեաները ավելի ուժեղ էին լինում, ազգակների գերհզորության շնորհիվ, կուտակվածքները ավելի խճճվում, բարձրանում էին և ստեղծում պականման (շատ ավելի հզոր, քան սառցացին պակերն են ըեւույին օվելիանուներում) ուկեփի ձևեր:

Ավելի ուշ էուցրողենետիկ երեւյթները նոր բնույթ են ստանում. պատյանի ընկորները, որոնք արդեն գերհզոր\* էին ու խոռոչյան պատճառով շատ ավելի ծանր, չէին ենթարկված ավելի թույլ հուզվող (քան երկը պատյանավորման սկզբում) մակմայի ազգեցության և սուզվում էին նրա մեջ: Ծանրությանից սուզվող պատյանի հատվածները ուղղաձիգ (ուղիալ) ճնշում էին մազմատիկ մասնայի վրա, նրա մեջ բռնում էին որոշ ծավալ և ստիպում էին նրան մեկ ուրիշ տեղում գորս մղել համապատասխան ծավագաչափ մասսաներ:

Էպեցրողենելիսի ժամանակը երբ պատյանի հատվածները խիտ գասավորություն են ունենում, հաճախ սաղիալ ճնշումը վերափոխվում է տանգենցիալ (կողային ճնշման), քանի որ ինսոպ ու բարձրացող ընկորները սեղմվում են իրար: Այս գործողության հետևանքն այն է լինում, որ ընկորներից շատերը ճզմվում են և նրանց եզրամասերում առաջնում են ծալքեր:

Քիչ չեն արձանադրված վոյցեր, որոնք տատանման մեջ են եղել պատմական ժամանակաշրջանում, կամ տատանվում են գեր այսօր (Մշանգինավյան թերակղզի, Միջերկրական ծովի ավազանը և այլն):

Էպեցրողենետիկ երեւյթների առանձնահատկությունն այն է, որ շարժիք ուժեղը տեղաբաշխվում են լայն տարածականություն ունեցող պատյանի հատվածի վրա, ուստի և շարժումը գանդապ, տեսական և միայն փոխվում է շարժվող օբյեկտը տարածության մեջ:

### Օրոգեթեզ կամ լեռնակազմություն

Ինչպես վերևում նշվելիք, էնդովեն ուժերի ուղղաձիգ ու կողային ճնշումներից երկը պատյանի տարբեր հատվածները ծալքավորվում փոխում են իրենց տեսքը: Պատյանի այս փոփոխությունները զիտության մեջ օրոգենեզիս անունն են ստա-

\* Գերհզոր—շերտերի հաստության խմասով:

յեւ չնայտծ լեռնակաղմությաւն հասկացողությաւնը շատ ավելի  
լայն հասկացողություն է: Այս աեսակետից անհրաժեշտ ենք  
համարում նշելու, որ օրոգենեզի դորձմածքը, սրանից հետո  
պայմանականորեն մենք դորձ կածենք միայն անհետության  
լեռնակաղմության իմաստով, իսկ լեռնակաղմություն բառը՝  
ըսդհանուր լեռնակաղմության իմաստով, որի մէջ կմասն թէ  
ներքին և թե արտաքին ուժերի շնորհիվ կատարվող լեռնակաղմ-  
մությունները:

Օրոգենեզի ժամանակ երկրի պատյանը միայն պարզ ծալ-  
քավորություններ չի առաջացնում: Նախ ծալքավորումը կարող  
է ընթանալ երկու ուղղությաններով՝ պլիկատիվ և դիգյունի-  
տիվ:

Պլիկատիվ ծալքավորման գեղքում, ծալքեր պայող շերտերը  
պատռափածքներ, խցվոծքներ, նետվածքներ չեն առաջացնում,  
իսկ զիզյունկտիվ ծալքավորության գեղքում՝ ընդհակառակը:

Պլիկատիվ ծալքավորության համար հատուկ են ձգված՝  
կենտրոնական մասերում բարակած, իսկ եղբային մասերում  
հաստացած շերտերի առկայությունը, որոնք կրում են ֆլեկու-  
րաներ անունը: Եթե ֆլեկուրաների առաջացման գեղքում  
տանգենցիալ ուժերը ձգվող շերտերի նկատմամբ ունեն հակա-  
ռիք ուղղություն, ապա մեկ ուրիշ գեղքում՝ շարշաթելիքի առա-  
ջացման գեղքում շերտի վրա ագրող ուժերը ուղղված են շեր-  
տի եղբամասերից գետի կենարունը, որի հետեւանքով շերտերի  
կենտրոնական մասերը հաստացած են լինում և շերտի մի մասը  
որոշ անկյան տակ ծալքած է լինում մյուսի վրա:

Դիգյունիտիվ ծալքավորման համար հատուկ են, ինչպես նշե-  
ցինք, ծալքերում առաջացող խզումները: Այս գեղքում երկրի  
պատյանի ծալքավորվող շերտերը չկարողանալով իրենց պլաստի-  
կականությամբ ու առաձգականությամբ դիմադրել էնզոգեն ու-  
ժերին; Կորպավում են, որոց հատվածներ իջնում են իրենց ծան-  
բության շնորհիվ ներքե, առաջացնում են պարզ ու բարդ իջվածք-  
ներ՝ գրաբեններ, որոց հատվածներ՝ բարձրանալում են վերև՝ իրենց  
հարկան հատվածների համեմատությամբ, տալիս են հարստեր:

ԵՐԵԿԻ պատյանի բեկորահատումները անկանոն են լինում, քաշնի որ ծալքավորվող պատյանի տակ թագնված միջուկը շատ կարծր է լինում և հանդես է գալիս որպես ցցվածքներ, այս դեմքում առաջանում են կաշավոր լեռներ և այլն։ Պետք է նշել, որ օրովենետելի երեւյթները ընդհանրապես հատուկ են նաև վածքային ապառաշեցուի համար։ Նստվածքային շերտերը մաքմատելի շերտերի համեմ ասությամբ պատասխկ լինելով, ընդունակ են ճգմվելու, ծալվելու, սովալու և զրանց հետևանքով առաջացնելու ուղիղ, շերտպիր, պառկած և այլն ծալքեր, վերնասողեր (բարետի), ծածկոցներ (ուկրու), նետվածքներ (օքրօչու) և այլն։

Անչ վերաբերվում է մագմատիկ ապառների ձեափոխության, պայցմանավորված տեկտոնիկական պրոցեսներով, նըրանք ավելի հաճախ առաջացնում են պլատֆորմաներ\*—պատվանդաններ, պլետաներ\*\*—սալեր, կոշտեր, վահաններ\*\*\* և այլն։

Անհրաժեշտ համարում ընդգծել, որ օրովենեղիսի ժամանակի շաբաթիչ ուժերը ընդդրկում են շատ ավելի փոքր սարածություններ, քան էպիցրոպիներիսի ժամանակի։ Այս դեպքում էնդոգեների վրա, ուստի և շատ ուժեղ են հանդես գալիս, համեմատութեն կարծ ժամանակում (երկուարանական մեկ զարյամ) վերջացնում են իրենց աշխատանքը և երկրի ամենաաչքի ընկնող լոռնաշղթաներն են առաջացնում։

Քանի որ օրովենեղիկ երեւյթները կտաված են այս կամ այն երկրաբանական գարտշրջանի հետ, այդ իսկ պատճառով նըրանք դասակարգվում են ըստ երկրաբանական հաստիկի։

\* Պատվածքորմաները կարծր բյուրեղավոր կամ մետամորֆիկ ապառներից կազմված զանգվածներ են երկրի պատյանում, որոնք ծալքավորման շեն ենթարկվում, կարող են միայն շատ թույլ չափով բարձրանալը։

\*\* Պետանիեր—սալեր, նույն պլատֆորմաներն են ավելի հարթ մակերեսույթներով, առաջացնեն հնագույն բյուրեղավոր ապառներից, ծալքավորվել են վաղ գեոլոգիական պերիոդներում, առանձները մետամորֆիզմի են էնթարկվել, ճեղքածքները լցվել են մագմայով, և բեկորները շատ վեգետացներ են։

\*\*\* Վահանները բյուրեղավոր կարծր ապառներից կադմած զանգվածներ են, որոնք իրենց ուսուցիկ ու գոգավոր մակերեսներով հիշեցնում են վահանները։

Օրոգինեատիկ լեռների հիմնական տիպերն են Կալեգոնյան, Հերցենյան (Դարեսայինյան), Ալույան (Դինարյան և նվթակամբը) լեռները: Մեզ՝ հողագնաներիս այս խնդիրը հետաքրքրում է այնքանով, որ որքան բնասերը հին են (Կալեգոնյան), այնքան նրանք ամրակուռ են (բյուրեղա լոր ապառների առլայության հետհօնքով), իսկ ժամանակակիցները՝ շատ մաշված են, ցածրագիր, երբեմն անգամ հարթացած, իսկ երիտասարդ լեռները (Ալպյան) ընդհակառակը:

Պլատոնական կամ երարխային երևույթներ

Հայանական է ընթերցաղը նկատեց, որ մենք երարխային երեսոյթները զիտում ենք առկանական երեսոյթների հետ զուգորդված: Սրբն աղջիսօք, որ լավայի արտավիժուանները երկը իմակերեսուց կամ ծովք հատակը, կամ նրա կուտակումները երկը պատյանը վերին շատուրի տակը (որի հետևանքով երկը մակերեսոյթը ուռչում բարձրանում է—տալիս է գմբեթածե ձեւը), բոլորն էլ պայցմանափորված են լավայի ներքին ճշշումներով և երկը պատյանի վրա առաջացող պատովածքներով: Ծյուեղ հետաքրքրականն այն է, որ ոչ թու պատյանի ձեւըն են մետամորֆիզմի (ձևափոխության) ենթարկված, այլ նոր ձեւը են առաջանում ի հաշիվ երկը ընդերքից գեղով երկը մակերևույթը ձգաղ և նրա վրա դուրս եկող մագմաների կուտակման՝ ակառմուլյացիային:

Եթե այսօք զեռաս երկը ուելիքի հիմնական գծերը որոշող առաջացումները հանդիսանում են օբյեկտների ձեւը, ապա ուրեմն այդ ինդիպում ամենայն իրավմամբ երկրորդ տեղը պատկանում է պլատոնական ձեւըն և վերջին տեղը նոր արտաքին ուժերի (էլեղութեն) շնորհիվ առաջացած ձեւին:

Այս իսկ տեսակետից ավելորդ չենք համարում մի քանի խոսք ասել երարխային ձեւը մասին:

Պլատոնական ձեւը շատ բազմազան են և մեկ ձեւից մյուսին անցումը այնքան բազմաթիվ տարածեռությունների միջակ է կատարվում, որ ընդհանրապես նրանց սահմանագտելը շատ դժվար է: Չնայած այս հանգամանքին, գեղուզները, եներով ընդհանուր ձեւը մեջ եղած համեմատաբար խիստ արտահայտված ինքնատիպ հրաբխային լեռների ներկայացաւ-

ցիշների ձևերից, բաժանում են նրանց հետեւալ խմբերի՝ ցաւ-  
մաքային արտավիճակած, սոսորերերյա, չարտավիճակած և ծովա-  
յին, որոնք ունեն իրենց ախտային ներկայացուցիչները: Մենք  
կանոն կառնենք միայն 1 խմբի տիպերի վրա, քանի որ Ա  
խմբի հիմնական ձևը (ուսուցիկ կիսադրության) նշեցինք վերեւում,  
իսկ 3 տիպի ներկայացուցիչները կրկնում են առաջինի ձև-  
վերը:

1. Պելեյան տիպ, Կոր գաղաթով ծածկաված, երեարավիզ-  
գանգանման, զառիթափ լանջերով, միջին բարձրության լեռներ-  
են: Փոքր բարձրությունները պայմանավորված են լեռների հիմ-  
քի փոքր լայնությամբ:

Այս լեռները միանդամայն աննպաստ են հողակազմու-  
թյան համար, քանի որ լանջերը դառիթափ են և հողմանար-  
ման նյառթերը չեն կարողանում ամրանալ նրա լանջերում  
այն պատճառով, որ կաղմիսած է թթու (սիլիկատներով հա-  
րուստ) ապառներից, որոնք բռնականության համար անհրա-  
ժեշտ սննդանյութեր չեն պարունակում իրենց մեջ կամ պարու-  
նակում են շատ չնչին քանակությամբ:

2. Վեզուվյան կամ վուկանատիպ, Կոնաձև, բարձր լեռներ-  
են (Մասիս), լանջերը թույլ դասիթափ են, կազմված են թույլ  
թթվային ապառներից: Այս տիպի լեռների լանջերից ես քայ-  
քայման պրոդուկտները ուժեղ անդատարգում են, որի հետե-  
վանքով հողառաջացումը թույլ է բնթանում:

3. Ստրամբուլյան տիպ. Զգիած քառանիստ կոռորի ձևունի,  
կլորացած կողերով, կատարը բազմագույթ է. վերջիններս  
տուաջացել են խառնարանի վլումների հետեւանքով, քանի որ  
հրաբուխը ժայթքելիս պարբերաբար մերթ արտավիճել է լովա-  
մերթ դադեր են պայթելու առաջացրել վլումներ: Լանջերը  
շատ մեծ թեքություններ չունեն և համեմատաբար հարուստ  
են հողակազմության համար:

4. Հափայան տիպ. Հափայան տիպի հրաբուային զաղաթ-  
ները բարձրանում են աստիճանաձև:

Այս ձևի առաջացումը պայմանավորված է հրաբխի պար-  
բերաբար զօրծելով, սկզբից ուժեղ, առաջին լավանների սառե-  
լուց հետո՝ ավելի թույլ (նույն խառնարանից), և այլպես շա-  
րունակելու:

Հրաբեսի աստիճանների կողերը անհարմար են հողակաղմություն համար՝ զառիթափության պատճառով, իսկ գագաթները միանգամայն հարմար են հարթ լինելու շնորհիվ:

5. Եյֆելյան, խլանդական, նոր զելքանդական. Սրանք հրաբխային ձևեր են, շատ ցածրագիր, ունեն վահանի էամ վահանիկների ձև, իսկ բուն խլանդականը ալիզը աշքի է ընկնում նրանով, որ խառնարանը շրջապատի հարթային տարածության համեմատության շատ ցածրագիր է, հաճախ (հանգած հրաբուխների գեղքում) խառնարանները լցվում են ջրով և կազմում են լճեր, կամ լճերի բնմբավորություններ:

Այս տիպի հրաբխային ձևերը՝ միանգամայն նպաստավոր են հողակաղմության համար:

6. Ֆումարսյան տիպ. Սրանք ցեխային հրաբուխներ են, ունեն գործարանային ծխնելույզի ձև, մեծ տեղ չեն զրավում և հանգըլուց հետո քայլայվում, հարթվում են:

Էնդուկեն ուժերի պատճառով կատարվող երկրի ձևերի փոփոխությունները դեռ այսօր ել իրենց վախճանին չեն հասաել գեռես կան գործող հրաբուխներ, որտեղ էնդուկեն ուժերը հանդես են գալիս կենտրոնացած ձևով, համեմատաբար կարճ ժամանակի ընթացքում:

Սեյսմիկ երեսյքներ, կամ երկրաշարժեր

Երկրի մակերեսութիւն տեղի ունեցող տեկտոնական ու պլատոնական երեսյքները, իրենց հերթին, պայմանավորում են երկրաշարժերը. Վերջիններս ավելի շատ խախտում, քայլայում են մինչև այդ գոյացած ռելեֆի ձևերը քան նոր ձևեր են առաջացնում:

Մեր օրերում սեյսմիկ երեսյքները կորցրել են իրենց հարատես և համեմատաբար համատարած բնույթը, նրանք հիմա հանդես են գալիս առանձին-առանձին բներում և ունեն ակնկաշյային բնույթ:

Փոկվել են նաև երկրաշարժերն առաջ բերող պատճառները, հիմա նրանք հիմնականում պայմանավորվում են երկրի ընդերքում տեղի ունեցող փլչումներով (սառըերկրյա ջրերի առաջացրած խոռոչներում), գագերի կուտակումներով և պայթյուն-

մով, նոր, բացառիկ գեղքերում լավայի կուտակումով՝ տեղաշարժով և տեկտոնիկ պրոցեսներով:

Այսպիսով, երկրի ներքնածին ուժերը հանդես դարձվ, նրա տարբեր հատվածների վրա տարբեր լնատնությությամբ ու տեղողությամբ, ստեղծում են սելիֆի արև կամ այն չափով արտահայտված դրական (հիմնականությ) և բացառական ձևերը:

Կարենով այս է, որ որքան ինտենսիվ են զործում էնդուզին ուժերը, այնքան ավելի խիստ ձևափոխման են հնթարկում երկրի պատյանը, այնքան ավելի լարում են ձևափոխվող հատվածների մակերեսը՝ թնդը՝ քայլքայում ու քայլքայման հնթակու են գործնում նրանց:

Եսր սանդուղած սելիֆի ձևերը երենց հերթին պատճառ են դառնում էկզուտին (մակոծին) ուժերի զարգացման ու ինտենսիվացման:

Տեղանքի բարեբությունների, գիրքազբութների (էքսպուզիտների—կողմանայացալթյան), լանջերի թեքությունների, երկարությունների, և սելիֆի ձևերի հսկայտկան տարրերությունների համանություն ստացվում են ջերմությունների, մթնությունին ակզումների ու հոսող ջրերի քանակի ու ամպլիտուդների, քամիների ուժերի, ուղղությունների և տեսդությունների մեջ տարրերություններ, որոնք հիմնովին կերպարանափոխում են տեղանքի սկզբնային կերպարը:

Այսպիսով էնդուզին և էկզուտին ուժերի անդուլ պայքարում զարգանում է սելիֆը, որը ինքը ծնունդ լինելով ֆիզիկաաբբական երկույթների համատեղ զործունության և փախազգեցության, իր հերթին աղջում ու փոփոխում է իրեն ծնող բնությունը:

